

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԱԶԳԱՅԻՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԹԵՐԹ

ՌՅԿԸ-Թ

ՀԱՏՈՐ

ՀԷ

1919

ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԹԻԻ 12

Ս.
ՂԱԶԱՐ

ԻՆՉ ԲԱՆԻ ԿԸ ՍՊԱՍԷ ՀԱՅԱՍՏԱՆՆ

Ահա տարին բոլորեցաւ, յորմէ հետէ մահացան ռուսի զորտն լռեց, եւ խաղաղութեան ձայնն հնչեց: Յաղթող ազգերու ցնծալից ծափերու թնդիւնը, գոչելով անցաւ խնդաւիկն հրապրեաց դաշտերու վրայէն, եղեկիկեան շունչի պէս բարձրացաւ լեռներու քարավէժ լանջերով մինչեւ զրահապատ գագաթները, տարփողեց աշխարհի խաղաղութիւնն:

Շաւափնամափ քաջաց սուրերն՝ դարձան պատուով իրենց պատեանը. մարդախանձ մարտի հեղեղն ցածացաւ երկրի երեսէն, նոյնան աղաւնին, յաւերժական հաշտութեան խորհրդանշանը, Մասեաց սուրբ սարի գագաթէն, ձիթենույ կանաչ շիւղն ի բերան, կ'իջնէր մի անգամ եւս աւետարեր հաշտութեան Հայոց աշխարհին: Հայաստանն՝ մարտիրոսական բոսորագեղ ծիրանիով զարդարուն, թօթափելով հինգ դարերու ստրկութեան շղթայներ, ձգեց ազատ ձեռքերն դէպ ի Մասիս եւ սպիտակ աղաւնին իջաւ կանաչ տերեւովն կարմիր ձեռքերուն մէջ. սգամաճ երկար սպասումէ

վերջ՝ Ազատութիւնը եւ խաղաղութիւնը իւր գրկաց մէջ կը համբուրէր Հայաստանն. հիմայ ուրախութեան եւ խնդութեան արտասուք կը կամէին վշտալից աչքերէն:

Հայրենի գետակներ Հրազդան, Երասխ եւ Ախուրեան, լռեցուցին ողբոց մրմունջներն, արիւնամածաւ հովիտներն արգելին իրենց հեծկլտանքներն եւ ունկնդրեցին Անուշաւանի նուիրական սօսեաց ոստոց շրշիւնին, որ խորհրդաւոր ձայնով կը կրկնէր Արարատեան սարերու արձագանգն. խաղաղութիւն:

Ահ, ի՜նչ խանդավառ վայրկեաններ ապրեցանք. Հայ ժողովուրդն՝ իբր մարգարէի հրաշագործ շնչովն կենդանացած, ելան իրենց թագստոցներէն, իրենց գերեզմաններէն, ազատութեան յուսով պատարուն՝ դէպ ի հայրենիք ուղղեցին իրենց դողըռնուն քայլերն: Յոյսն՝ վերջին աստուածունիին՝ կը ժպտէր անմեղօրէն ամենքին, ցոյց տալով Ազատութիւնը՝ որ թիթեռնիկի սիրաւ տարի թռչցնելով կը ձգէր իւր ետեւէն մեր հայրենիքի բեկորներն, դէպ ի ԱՐԴԱՐ,

ՅԱՐԱՏԵԻ խաղաղութեան երջանիկ եղա՞ւուրութիւնն:

Այն տարի մ'է, Թափորը վարանտ քայլերով կը յառաջէ յաղթութեան անցած հանապարհով: Հայերիս սպասումներն, աւաղ, դառնութեամբ լցնն սրտերնիս եւ ակնկառոյց դէպի անստոյգ ապագան՝ ամեն ոք իւր ընկերին կը հարցնէ զարմանքով. Ո՛ր է խաղաղութիւն:

Առանց սնափառութեան, առանց մեղանջելու հշմարտութեան դէմ կրնամք բաց հակառակ մտել Թէ՛ Հային բաժին ինկած հակառի վրայ, մենք եւս յաղթեցինք այն թշնամոյն զոր «Տայպ» — «Տան» եւ «Լա-կրոայ» դառնացած ոգւով բարբարոս կուշեցին:

Դաշնակիցներն յաղթեցին այդ թշնամոյն եւ կնքեցին Վերսայի եւ Սէն-Ժեռմէի հաշտութիւնն: Անգլիա իւր ծովերն ապահովեց եւ քառապատկեց իւր ցամաքի ոյժն եւ տիրապետութիւնը. խաղաղութիւն եղաւ իրեն համար: Գաղղիա՝ վերստացաւ իւր կորուսած գաւառներն՝ Ալսազ եւ Լորէն, Սիբիան ժառանգեց եւ գերմանական գաղութներն, ամիացուց իւր սահմաններն, ապահովցուց իւր տունը. խաղաղութիւն եղաւ իրեն համար: այսպէս մի ըստ միօքէ ի տալիան եւ կարգ մը փոքր ազգեր: Սակայն միայն Գերմանացին չէր բարբարոսը, այլ նաեւ գազանաբարոյ Թուրքն՝ անոր անգուգական պատերազմի դաշնակիցն: Իրաւունքի, արդարութեան եւ ազատութեան ախոյեան եւ պաշտպան յիշեալ լրագիրներն կրնան չյիշել որ Հայն նոյն այդ զիրենք ԴԱՒԱՅՆՆՈՎԻ դէմ կուռեցաւ չորս տարի: Հայ զինուորը՝ Դարդանէի քարայրներու մէջ յօշոտող Անգլիացի եւ Գաղղիացի զինակիցներու վրէժն կը լուծէր Թէ կանոնաւոր զօրքերով եւ Թէ կամաւորներով Ռուսական կրկին հակառակներու, Մառնայի ափերուն եւ Արարիի բարձունքներու վրայ: Միմէ արդարութիւն է յաղթութենէ վերջ մուսցուածեան տալ Հայ ազգի արդիւնքն եւ գրկել խաղաղութեան բաժինէն:

Տարի մը եղաւ, զինուած խաղաղութեամբ ապրեցանք մեր դրացի ազգերու հետ. հուր

Ժայթքող բերանները եւ հարստող գնդացիներն, կրկին արեւնով ներկեցին այն հողերն, որ Թուրքերի ձեռքէն արեւնով գնուած էին. մեր հայրենի սահմաններն «Բարբարոսները» ոտնակոխ ըրին ի հեճուկս Դաշնակիցներու ներկայութեան:

Այդ միջոցեւ դաշնակից ազգերն կը տօնեն հրճուագին մեծ յաղթութեան տարելիցն, անոնց փառաւոր Պետերն, որոց ձեռքն է վճռել փոքր ազգերու բաղդը, ի դէպ ժամու յիշեն խաղաղութեան ժողովի մէջ, նաեւ Հայ ազգի դիւցազնական կռիւներն խաւարի եւ բարբարոսութեան դէմ, հայրենիքի ազատութեան համար. յիշեն Համաձայնութեան հաւատարիմ մարտակից հայ զօրքերը, Հայ կամաւորներու փայլուն շահատակութիւններն՝ գերագոյն յաղթանակի համար, որոց յիրաւի կրնային նախանձիլ Մարաթնի եւ Թէրմուպիէի անմահ քաջերը, եւ որով Հայաստանն, իրաւունքի եւ ազատութեան ստեանէն, կը սպասէ իւր քոյրամիւ ընկճուած փոքր ազգերուն հաւասար, վարձատրուիլ, իւր արդարացի պահանջներուն լրամով: Հայ ազգը կը ցանկայ իւր վիճակը շուտով որոշուած տեսնել, արդար եւ յարատեւ խաղաղութիւն վայելիլ:

Քաղաքական ազատութեան Հանգանակ մ'է Հայ ազգի համար, Միացեալ անկախ Հայաստանի խնդիրը: Աղարկութիւնն եւ քաղաքակրթեալ տշխարհն՝ մեզի հետ կը պահանջեն որ օր յառաջ գոհացում տրուի նահատակ ազգի պահանջներուն, լրիւ եւ իսպառ ազատելով Թուրքի ազդեցութենէն, Թուրքի անհանդուրժելի եւ ստեղծ լծէն: Հայաստանի ընական սահմաններն պաշտպանելու համար՝ պէտք է Հիւսիսի եւ հարաւի ապագայ սպառնալիքներէն կամ տիրական իրաւունքներէն ապահովել զայն. մտցնելով բնդհանուր ազգաց ընկերակցութեան մէջ: Նոյնպէս Կիլիկիոյ կցումն Մեծ Հայաստանի հետ՝ զուտ ազգային խնդիր մ'է, Հայ ժողովրդի բարդ աւաւանման եւ յառաջադիմութեան համար: Պէտք է համոզուին Դաշնակիցներն եւ խաղաղութեան ժողովն Թէ մեր գոյութիւնը պահպանելու համար դա անկրթեշտ եւ կենսական պահանջ

մ'է։ Աւանց Միջերկրականի վրայ ելք մ'ու-
նենալու, թէ՛ ի վտանգի է Հայաստանի քա-
ղաքական ազատութիւնն եւ թէ՛ կայ սո-
վամահ կորչելու ստուգութիւնն։ Մեր երկրի
քնական կազմութիւն մեզի համար բանտ մը
կը դառնայ, որու մէջ ապրող ժողովուրդն
մահուան դատապարտուած է։ Այս անհրա-
ժեշտութիւնն զգացն դեռ Ժ.Ա. դարուն մեր
քաջ նախնիքն, որոնք պառտելով թշնամի-
ներու պատնէշներն, հասան տեղաւորուե-
ցան Տաւրոսի լանջերուն եւ Կիլիկիան ա-
փունջներու վրայ։ Հիմայ իսկ Հայ ազգը իւր
հաւատարիմ Սիսուանի վրայ երեք դարու
անվիճելի ՆԱԽԱԳՐԱՌԻՄՆ ունի՝ որ եւ է
այլ հետամտողներու հանդէպ....

Հայաստանին բարերարել՝ մարդկութեան
բարերարել է, ասած է համագործը, փոքր
եւ ֆնշուած ազգերու հօգը պաշտպանն՝
Կլատտոն։ Հայաստանն եղած է խանձա-
րուք հանուր մարդկութեան, բայց աւելի
Արիական ազնիւ ցեղին, որով Հայաստանը
բոլոր ազգերու հայրենիքն է, որոնք կուուե-
ցան Տուրանեան քարաքարներու դէմ։
Սուրբ աւանդութենէ գիտենք որ ջրհեղե-
ղէն սզատած մարդկութեան համար առա-
ջին հանդիսաւոր դաշն կուեցաւ Հայաստանի
հողի վրայ, ընդ մէջ երկնքին եւ երկրի։
Առաջին անգամ Նոյեան սղաւնին ընծայա-
բեր եղաւ Մասիսու սուրբ սարին. մեր
հայրենի լեռներն եղան առաջին Նուիրական
սեղան ընդհանուր ազգաց հաշտութեան
զոհին, որուն զօրութենապէս, սերունդէ
սերունդ անցնելով, ներկայ էին այժմու
խաղաղութեան ժողովի վճեատուններն։ Ե-
ռագունեան դրօշի գաղափարն իսկ, ծնունդ-
է Հայտնութեան եւ խաղաղութեան ծիածա-
նին, որ Նախ-կապից կամարն Հայաստանի
վրայ, իբր թարգման Ազատութեան իշխա-
րութեան եւ Հաւասարութեան։ Ուստի բա-
րոյական պարտականութիւն մը կայ Գաշ-
նակից Պետութեանց վրայ ի սէր մարդ-
կութեան եւ ի սէր Եւրոպայի մշտական
խաղաղութեան, վերականգնել զՀայաս-
տանն իւր պատմական սամաններու մէջ։
Հայ ժողովուրդը մեծ հաւատքով եւ յու-
սով կը սպասէ թէ ո՞ր Պետութիւնն վերջ-

նականապէս պիտի հովանաւորէ։ Եւրո-
պա Ամերիկային շնորհած է այդ պատիւը
եւ Հայ ազգն ուրախ է։ Երջանիկ պիտի
զգայինք զմեզ այն օրը, երբ Ազատութեան
նախամարտիկ Ուշինկստոնի եւ Լինքոլնի
հարազատ որդիքը, պաշտօնապէս հրատա-
րակէին իրենց հաւանութիւնը։ Սա պիտի
համարուի իրենց գաղափարի յաղթանակն,
ազատագրական Մեծ պատերազմի գլուխ
գործոցը եւ Յաղթող Պետութեանց անմահ
փառքի կոթողն։

Ահա թէ ինչ բանի կը սպասէ Մայր Հա-
յաստանն։



ՀԱՅՐԵՆԻՔԻ ՆՈՐ ՎՏԱՆԳԸ

Գիտենք որ Հայն եղած է միշտ ընդու-
նակ իւրացնելու արեւմտեան զարգացումն,
Մեծին Աղեքսանդրի ժամանակէն սկսած
մինչեւ ի ի դարը։ Նա մրցակից հանդի-
սացեր է Յոյն եւ Լատին ցեղերուն գիտու-
թեանց, գեղեցիկ արուեստից եւ գեղեցիկ
դպրութեանց մէջ, եւ կորզած է անմահամ
դափնիներ. բաւական է յիշել զՊարոյր
Հայկազն, որուն Հռոմ պղնձէ արծառն մը
կանգնեց այսու վերստաւութեամբ. Թագու-
նին տիեզերաց, Թագաւորի բանին։ Եւրո-
պայի եւ Ամերիկայի Համալսարաններու մէջ
Հայ ուսանողն նորոգած է Պարոյրի նին
դափնիներն, եւ իրաւամբ կը վայելէ, յառա-
ջաւոր Ասիայի մէջ, միակ զարգացած եւ
քաղաքակրթուած ազգի համբաւը։ Բայց
չէինք գիտեր որ Հայն կարողա՞յ նմանիլ
յետամնաց Ռուսաստանի կոլլորանք՝ Բոլշե-
վիկներուն։

Եւ դժբաղբաբար, ազգիս յագիւններն
վայնասուն կը բարձրացնեն, թէ Հայութեան
կեանքին ՆՈՐ ՎՏԱՆԳ մ'իւս կը սպառնայ.
ներքին վտանգ մը, որ վարակիչ մանրէակ-
ներու պէս, կրնայ թունաւորել մեր քաղա-
քական եւ բարոյական կեանքը. այդ վտանգն
է «Հայ Բոլշեվիկութիւնն»։ —

Հայ ժողովուրդն դեռ դասակարգային

կռիւ չէ ունեցած, վասն զի սեփական հայրենիք եւ ազատութիւն չունէինք։ Մեր ժողովուրդն ոչ եւրոպական ազգերու կազմակերպութիւններն ունի եւ ոչ նոյնքան քաղաքական հաստեղծութիւն։ Այո՛, ունինք մենք ալ կարգ մը մտաւորականներ, որոնք անխորհրդաբար «բարեփոխութեանց» կը մըտածեն ձեռնարկել՝ Անկախ եւ Ազատ Հայաստանի համար, որ դեռ գոյութիւն չունի։ Անոնք ջերմանողներու մէջ ամօտամիտակ հասած պտուղներու կը նմանին, առանց մտածելու, թէ մեր հայրենիքը ցուրտ ու ձիւն է, եւ քանասար գայլեր կ'ոռնան մեր հարց գերեզմաններու վրայ։ Սպասենք վին չեւ երեխան ծնանի, ապա անոր համեմատ կարողին զգեստները։

Օ՛հ, չմոռնանք որ Հայ ժողովրդէն ալ կան *իշխաններ, խաներ, փաշաներ*։ Բայց անոնք կը գտնուին Հայաստանէն դուրս, եւ ցարդ հպատակ եղած են օտար պետութեան մը եւ իրենց անձնական արդեանց եւ արժանեաց համար ստացած են ազնուականութեան տիտղոսներ։ այս՝ Հային համար փառք մ'է։ Կան նաեւ *հարուստներ*։ Բայց մենք գիտենք որ անոնք մի քանի տարի առաջ ԲԱՅԻՌ դասակարգին կը պատկանէին, տարիներէ վերջ դեռ անոնց բերանը սոխ ու սխտոր կը հոտէր։ անոնք հարստութիւնը գիշեր ցորեկ թափած քրտնքով ժողկեր են եւ *խնայութեամբ* պահպաներ են։ Ի՞նչ քանակը բոլշեւիկն պիտի համարծակի իւր ընկերոջ վրայ ձեռք վերցնելու, երբ հաւանականութիւն կայ որ ինքն աւելի կարող է հարստանալ, եթէ խղճով եւ պատուով աշխատի, եթէ պարտահանաջ լինի դէպ ի մարդկութիւնն, եւ հրաժարի գողութեան, աւազակութեան, հրդեհելու եւ կործանութեան մի մտքէն եւ գաղափարէն։ Բայց այդ իշխաններն, հարուստներն, *քաղաքացիներն*, եւն եւն, չէ՞ որ գիտենք թէ, Հայ ազգի եւ ոչ 5% տոկոսը կը կազմեն։ Աշխարհագիրք ցոյց տուած են որ 90% *երկրագործ* են, միւս 10% Առեւտրականներ եւ արուեստաւորներ։ Ո՛ւմ դէմ կռիւ պիտի մղեն, ջարդեն, սպաննեն, վառեն եւ կործանեն «Հայ բոլշեւիկներն»։ Մի՞թէ իշխան թէ հարուստ,

առեւտրական թէ արուեստաւոր, ամենքն ըստ իրենց կարողութեան, յառաջ եւ յետոյ պատերազմին՝ չհանդիսացան իսկական բարեարներ կարօտեալ ազգիս։ Ինձէ գիտե՛նանք գնահատել բարեգործութիւնը, ողորմութեան աղբիւրը չի ցամաքիր։

«Հայ բոլշեւիկներն Եւրոպիոյ եւ Ամերիկայի, բանտրական շարժումներու ցաւէն բռնուած, կ'ուզեն նոյն թելը հիւնել, նոյն քայլքով քայլել զգոյշ կեանս»։ Հայ ողջամիտ եւ տնարար ժողովրդի հետ խաղալէն, թող նային թուրքի ինկած դիակին, թող աչքի առաջ ունենան տափակ գորտը, որ գեղեցիկ եզան մեծութեան հասնելու համար, ուռելով սատկեցաւ։ Թող նային իրենց «ընկեր» Ռուս բոլշեւիկներուն, անոնց կատառած դերին։ Ի՛նչ տխուր պատկեր։

Բաբելոնի ոսկի արծառի պէս, տիտանեան Ռուսաստանը՝ հիմն ի վեր կործանեցաւ իւր կաւէ ոտքերուն վրայ։ Վասն զի նա իւր բռնաւորական կազմութեամբ, յեցած էր խաւար եւ անգիտակից ամբոխի վրայ։ Թովիշ լեզու մը կըրցաւ համոզել երէկի քիրտ ուժի երկրպագուն, դիւրապատրաստ կեանքի եւ հարստանալու սաղբանքով, որպէս զի կատարութեամբ կործանէ հակադրակէ կուռքը, հոգ չէ թէ ինքն ալ անոր աւերակներու տակ կը թաղուի։ Ահա այս է «բոլշեւիկութեան իմաստասիրութիւնը, եւ անոնց փառքն»։ Եւ իտե՛նական ամօթն։

Թող չտանք, Եւրաքը, որ Մայրն Հայաստան այդ ցաւերն ալ տեսնայ։ Հայ ժողովուրդն՝ ինչպէս ազգային եւ հայրենասիրական գիտակցութեամբ կ'ուրեցաւ դաւաճող Բարբարոս բռնաւորի դէմ, եւ այսօր հինգ դարերու ստրկութենէ վերջ կը պատարաստուի տօնելու իւր հայրենիքի ազատութիւնը, նոյն քաջութեամբ եւ ողջմտութեամբ պէտք է քանայ խեղդել իւր սաղմի մէջ այդ նոր վտանգը։

Ատելի են մեզի հՈՐ ԲՈՅԱՅԻՐՆԵՐՆ որ կ'ուզեն նորոգել մեր իմն ցաւերն եւ իմն շղթայներն։

ՄԵՂՈՒ ՇԻՐԱԿԱՅ

